# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՎԵՐԱՆՈՐԳՎԱԾ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Դեկտեմբերի 4-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ Էջմիածնի հիվանդանոցի հիմնովին վերանորոգված մանկաբուժական բաժանմունքի բացումը:

30 հիվանդի համար նախատեսված բաժանմունքը զբաղեցնում է մի ամբողջ հարկաբաժին: Այն հիմնովին վերանորոգվել է Մայր Աթոռի հովանավորությամբ ու Վեհափառ Հայրապետի անմիջական հոգածությամբ: Նորին Սրբությունը, աղոթք անելով հիվանդանոցի աղոթատանը, մեկական մոմ վառեց նաև ամերիկահայ բարերարներ տեր և տիկին Համլետ և Ժոզեֆին Գյուլամերյանների անունից, որոնց ֆինանսավորմամբ իրականացվել են վերանորոգման աշխատանքները, և որոնք շարունակում են իրենց հաստատած հիմնադրամի միջոցով օգնել Գևորգյան ճեմարանին, մանկատներին և կարիքավոր մանուկներին ու ծերերին:

Վեհափառ Հայրապետը շրջեց հիվանդասենյակներում, եղավ նաև սրտաբանական բաժանմունքում: Հանգամանորեն ծանոթանալով հիվանդանոցի կարիքների հետ, Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ հետագայում ևս կշարունակվի Մայր Աթոռի հոգածությունը հիվանդանոցին:

Վեհափառ Հայրապետը իր առաջին այցելության առիթով նաև կատարեց մի նվիրատվություն /հինգ հազար դոլար/ տեր և տիկին Գյուլամերյանների հիմնադրամից հիվանդանոցին անհրաժեշտ գույք ձեռք բերելու թե բժիշկների, թե բուժքույրերի և թե հիվանդների համար:

Բացմանը ներկա էր նաև Արմավիրի մարզպետ Սեդրակ Հովհաննիսյանը:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*